

Հինգշաբթի, 3 մարտի 2022թ.

**«Հետք» թերթի լրագրող
Ռինա Գրիգորյանին**

Հարգելի տիկին Գրիգորյան,

Ի պատասխան Ձեր հարցման՝ ստորև ներկայացվում է պատկան գերատեսչություններից ստացված տեղեկատվությունը.

1. Համաձայն Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏՀՀ) կողմից ներկայացված տեղեկատվության՝ 20.07.2020թ. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների բաժնի կողմից, թիվ 61205320 քրեական գործի շրջանակում ՀՏՀՀ-ի Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման մասնաճյուղից առգրավվել են նախկինում գործող «Համայնքային զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի և «Սաղե» Կոմպանի Ժենեղալ դը Թղավո դիդրոլիք բաժնետիրական ընկերության (SADE Compagnie General de Travaux D'Hydraulique JSC) միջև 30.12.2014թ. կնքված պայմանագրով նախատեսված Երևանի «Աերացիա» կեղտաջրերի մաքրման կայանի վերականգնման աշխատանքների վերաբերյալ առկա բոլոր փաստաթղթերը և մինչ օրս չեն վերադարձվել:
2. Հայաստանի Հանրապետության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև 2008թ. մայիսի 27-ին ստորագրված Երևանի խմելու ջրի համակարգի բարելավման և մաքրման ծրագրով տրամադրված 24,400,000 եվրո վարկի շրջանակում «Աերացիա» մաքրման կայանի կառուցման համար՝ ֆրանսիական «ՍԱԴԵ» ՋԱԳԸ ընկերության հետ 2014թ. դեկտեմբերի 30-ին կնքվել է «Աերացիա ԿՄԿ վերականգնման աշխատանքներ» N ՀՁԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-14/3 պայմանագիրը՝ 10,386,756.2 եվրո գումարով:

Ըստ Ջրային կոմիտեից ստացված բանավոր տեղեկատվության՝ «Աերացիա» մաքրման կայանի կառուցման/վերանորոգման նպատակով օգտագործվել են Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության

03.03.2022

կառավարության միջև 27.05.2008թ. ստորագրված ֆինանսական արձանագրության շրջանակում 2008թ. ՀՀ ֆինանսների նախարարության և «Natixis»-ի (ի դեմս Ֆրանսիայի Հանրապետության կառավարության) միջև ստորագրված վարկային և դրամաշնորհային համաձայնագրով տրամադրված միջոցների մի մասը: Համաձայնագրի նպատակն է եղել Երևանում խմելու ջրի համակարգի բարելավումը և մաքրումը և այդ նպատակով տրամադրվել է 500,000 եվրոյի դրամաշնորհ և 24,400,000 եվրոյի վարկ: Դրամաշնորհային միջոցներից օգտագործվել է 499,621 եվրո:

Վարկը տրամադրվել է տարեկան 1.75 տոկոսադրույքով, օգտագործված յուրաքանչյուր մասնաբաժին ենթակա է մարման 20 տարվա ընթացքում, որից 5.5 տարին՝ արտոնյալ ժամկետ է, ինչի ընթացքում մայր գումարի մարումներ՝ չեն իրականացվում: Վարկային միջոցներից օգտագործվել է 24,397,495.34 եվրո՝ 2013-2017թթ.: Վարկը ենթակա է մարման մինչև 30.06.2037թ.: Վարկի մարման և սպասարկման գծով ընդհանուր առմամբ ենթակա է վճարման 29,886,365.64 եվրո, որից 24,397,495.34 եվրոն որպես մայր գումարի մարում, իսկ 5,488,870.30 եվրոն՝ տոկոսավճար:

28.02.2022թ. դրությամբ վարկի մարման և սպասարկման գծով ընդհանուր առմամբ վճարվել է 4,153,821.68 եվրո, որից 1,589,287.67 եվրոն որպես մայր գումարի մարում, իսկ 2,564,534.01 եվրոն՝ որպես տոկոսավճար:

**Կատարող՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
Ֆինանսների նախարարություն**

**Տեղեկատվության և հասարակայնության հետ
կապերի վարչության պետ
Արմեն Խաչատրյան**

